Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. հունիսի 28-ի թիվ 6 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«28» 06. 2020թ.

ԿԱՐԳ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

(փոփոխություններով)

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսում ստացած և հիմնականում բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ Գավառի պետական համալսարանում ուսուցումը շարունակելու պայմաններն ու ընթացակարգը:

2. Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների՝ Գավառի պետական համալսարանում ուսուցումը կազմակերպվում է՝

ա) ըստ միջին ու բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի մասնագիտությունների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանության՝ 2-րդ կամ 3-րդ կուրսից, եթե առարկաների 25 տոկոսից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգարքների և քննությունների թիվը չի գերազանցում 8-ը.

բ) ուսումը կազմակերպվում է վճարովի հիմունքով՝ բացառությամբ սույն կարգի 6-րդ կետով սահմանված դեպքերի:

II. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ ԳՊՀ-ՈՒՄ

3. Գավառի պետական համալսարանում ուսուցումը շարունակելու հավակնորդների սահմանվածից ավելի մեծ թվի առկայության դեպքում համալսարանն իրականացնում է հավակնորդների մրցութային ընտրություն՝ առաջնահերթությունն ըստ հաջորդականության տալով այն հավակնորդներին, ովքեր ունեն՝

գերազանցության ավարտական փաստաթուղթ (դիպլոմ),

ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միջուկում առավել բարձր միջին գնահատական,

ամփոփիչ ավարտական ստուգման արդյունքում առավել բարձր միավորներ,

պետական որակավորող հանձնաժողովի կողմից հատուկ երաշխավորություն:

Նշված բոլոր պայմանների հավասարության դեպքում համալսարանում կազմակերպվում է հավակնորդների հարցազրույց:

4. Մրցույթով անցածներին համալսարանի ռեկտորի հրամանով թույլատրվում է մասնակցել ուսումնական պարապմունքներին:

5. Մրցույթով անցածների՝ որպես ուսանող հրամանագրումը կատարվում է միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների առարկայական տարբերությունների հանձնումից հետո:

Մրցույթով անցած և պարտադիր զինվորական ծառայության մեկնած անձանց տրվում է ակադեմիական արձակուրդ: Առարկայական տարբերությունների հանձման առավելագույն ժամկետը երեք ամիս է:

6. Մրցույթից դուրս Գավառի պետական համալսարանում անվճար ուսուցման համակարգ են տեղափոխվում՝

ա) 1-ին և 2-րդ խմբերի և մինչև 8 տարեկան մանկուց հաշմանդամները, որոնց համար, համաձայն բժշկական սոցիալական փորձաքննական հանձնախմբի եզրակացության, տվյալ մասնագիտությամբ սովորելը հակացուցված չէ,

բ) ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները, զոհված զինծառայողների երեխաները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված վկայականների,

գ) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաներին: